

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սույն թվականի մայիսի 18-19 վերջապես տեղի ունեցավ Հազարամյակի Մարտահրավերներ Հայաստան ծրագրի 2010թ.-ի Շահառուների Խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովի երկրորդ նիստը, որն անցավ խայտառակ մթնոլորտում և բազում ընտրախախտումներով: Ընտրություններից երկու-երեք օր առաջ հանձնաժողովի նախագահությունը հանձնաժողովի անդամներին նոր հրամայել էր հանձնաժողովի աշխատանքների անցկացման պլան: Ստացվում է, որ հանձնաժողովը պետք է այդ երկու-երեք օրերի ընթացքում կատարեր այն աշխատանքը, որը նախատեսվում էր կատարել քսան օրերի ընթացքում: Փաստորեն հանձնաժողովը իր ստեղծման օրվանից հարկադիր պարապուրդի էր մատնված, որը վերացնելու համար հանձնաժողովի նախագահը և քարտուղարը դիմել էին ՀՄՀ Հայաստան գլխավոր գործադիր տնօրենին: Ջարմանալ կարելի է միայն, թե ինչպես որևէ հանձնաժողովի նախագահություն, կարող է դիմել այլ մարմիններին իրենց ղեկավարած հանձնաժողովի աշխատանքները վերականգնելու համար:

Պարապուրդի 19 օրերի ընթացքում հանձնաժողովի մի շարք անդամներ կազմակերպելով աշխատանքային հանդիպումներ կայացրել են սուբյեկտիվ որոշումներ՝ առանց հանձնաժողովում քվեարկության դնելու, սկսել հայտերի թերությունների վերացման գործընթացը:

Ներքոստորագրյալներիցս մի քանիսը նույնպես փորձել ենք մասնակցել այսպես կոչված աշխատանքային հանդիպումներին,որի ժամանակ էլ ականատես եղանք մի շարք ընտրախախտումների.

1. Ուսումնասիրելով հենց առաջին թղթապանակի պարունակությունը, որտեղ գտնվում էին ստացված հայտերից 79-ը, նկատեցինք, որ դրանցից 63-ում առկա էին տարբեր տեսակի թերություններ, սակայն հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և ևս մի քանի անդամների կողմից դրանցից միայն 21-ը որակվեցին որպես թերի լրացված հայտեր: Վերջիններիս փորձեցինք հիշեցնել, որ Ընտրակարգը պահանջում է, որպեսզի հայտերը լրացված լինեն

ամբողջությամբ՝ դրանք վավեր հայտեր համարելու համար: Նրանք սակայն գտնում էին, որ հայտերի որոշ կետեր այնքան էլ կարևոր չեն և կարող են նաև լրացված չլինել...:

2. Աշխատանքային հանդիպումից հետո հանձնաժողովի նախագահը իր բնորոշմամբ թերի հայտերի թերությունները շտկելու նպատակով զանգահարել է հայտատուներին՝ տեղեկացնելով թերությունների մասին և սեփական նախաձեռնությամբ ուղղումներ կատարել հայտերի վրա՝ դրանք վավերացնելով իր իսկ ստորագրությամբ: Այս գործողությունները չեն դրվել քվեարկության հանձնաժողովում, ինչպես չէր դրվել նաև այն պնդումը, թե որն է թերի լրացված հայտ, որը ոչ: Շեշտեմ միայն, որ Ընտրակարգը պահանջում է ետ ուղարկել թերի լրացված հայտերը: Նախկինում նույնպես եղել են որոշ մանր թերություններ ունեցող հայտատուներին զանգահարելու դեպքեր, որը սակայն տեղի է ունեցել հանձնաժողովի բոլոր անդամների համաձայնությամբ, ձայնագրմամբ, որի արդյունքում պարզաբանվել են առկա թյուրիմացությունները. դրանք չեն կրել մասսայական բնույթ և չեն կատարվել առանց հանձնաժողովում քվեարկության դնելու: Եվս մեկ կարևոր հանգամանք: Նիստի ժամանակ ՇԽ օգնական տիկին Վիկտորյա Գրիգորյանից տեղեկացանք, որ հանձնաժողովի նախագահի կողմից արված ոչ բոլոր ուղղումների են կատարվել հայտատուներին զանգահարելու միջոցով, քանզի վերջիններս Վ. Գրիգորյանին ասել են, որ իրենց ոչ մեկն էլ չի զանգահարել:

Աշխատանքային հանդիպումներից հետո, նիստից առաջ ընտրական հանձնաժողովի անդամներից երկուսը, տեսնելով այս մասսայական անարդյունքությունները և դժգոհություն հայտնելով հանձնաժողովի աշխատանքներից, հայտնեցին ինքնաբացարկ և հրաժարվեցին շարունակել իրենց աշխատանքները ընտրական հանձնաժողովում:


Նիստը սկսվեց, ինչպես արդեն նշվեց, աշխատանքային պլանի հաստատմամբ, ինչն ուղղակի զավեշտալի է:


Այսպես կոչված գործունեության պլանի հաստատումից հետո հանձնաժողովի որոշ անդամներ սկսեցին ընտրախախտումների շարքը.

1. Որոշեցին ընտրակարգի 1.3 կետի թերի լրացված լինելը համարել հարգելի:
2. Որոշեցին 2.4 կետի լրացված ընդհանրապես լրացված չլինելու դեպքում համարել, որ հայտը լրացված է ամբողջությամբ:
3. Նույնը, որոշեցին, որ վերաբերվում է 1.6 կետին:
4. Հաջորդիվ լսվեց քաղաքացի Գ. Բալայանի բացատրությունները վերջինիս հայտի ուշացման վերաբերյալ, որին մանրամասն կանդիդատուրանք մեկ այլ հայտարարությամբ: Նշենք միայն, որ վերջինիս հայտը դրվեց քվեարկության և հանձնաժողովը կյացրեց ևս մի ապօրինի որոշում՝ ընդունելով ուշացումով ուղարկված հայտը:
5. Այնուհետև տեղի ունեցավ ընտրակարգի խախտման հերթական դեպքը. որոշեցին հայտերից մեկը պայմանականորեն ընդունված համարել, ինչի թույլատրելիության մասին որևէ տողով անդրադարձ չի կատարվում ընտրակարգում:
6. Որոշեցին նաև մերժել ևս երկու հայտեր, որոնք լրացված էին թերություններով, սակայն նրանց չէր տրվել ընտրակարգով սահմանված հնգօրյա ժամանակահատվածը թերությունները շտկելու համար:
7. Վերջին երկու քվեարկությունները վերաբերվում էին ստացված 282 հայտերի ընդունումը որպես ընտրողների և 19 հայտերի ընդունումը որպես թեկնածուների, ինչը ակնհայտ ապօրինի գործողություն էր, քանզի թե առաջին և թե երկրորդ ցուցակում առկա էին բազմաթիվ թերություններով հայտեր:


Հարկ է ընդգծել նաև արձանագրության առաջին և երկրորդ մասերում առկա են նիստի մասնակիցների բազմաթիվ արտահայտություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը: Գրանցվել են նաև այնպիսի փաստեր, որոնք նույնպես չեն համապատասխանում իրականությանը:

Ելնելով վերոգրյալներից, մենք՝ ներքոստորագրողներս հրաժարվում ենք մեր ստորագրությունները դնել երկրորդ նիստի արձանագրության տակ:

Հարթակառու հանրապետության անդամ Վահագն
Բալասանյան 

Հարթակառու հանրապետության
անդամ  Վ. Բ. Բալասանյան
21.05.2020

Հարթակառու հանրապետության անդամ
Հրաչյա Բալասանյան Նաճաճ
21.05.2020թ.

Հարթակառու հանրապետության անդամ 
Վահագն Բալասանյան
21.05.2020թ.